Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk **https://www.facebook.com/StYeghiche**

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 16th February 2025 Bulletin 8/2025

Fifth Sunday after Nativity

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ՏԻՄՈԹԷՈՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 3:1-12

Գիտցի՛ր թէ վերջին օրերը դաժան ժամանակներ պիտի գան. որովհետեւ մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, պոռոտախօս, ամբարտաւան, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, չարախօս, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, մատնիչ, յանդուգն, հպարտ, աւելի հաճոյասէր քան աստուածասէր: Անոնք ունին բարեպաշտութեան դրսերեւոյթը, բայց ուրացած են անոր զօրութիւնը: Դուն հեռացի՛ր անոնցմէ. որովհետեւ ասոնցմէ՛ են անոնք՝ որ կը մտնեն տուներէն ներս, եւ կը գերեվարեն մեղքով բեռնաւորուած տկարամիտ կիները՝ զանազան ցանկութիւններէ դրդուած, որոնք միշտ կը սորվին բայց բնաւ չեն կրնար հասնիլ ճշմարտութեան գիտակցութեան: Հապա, ինչպէս Յանէս ու Յամբրէս ընդդիմացան Մովսէսի, նոյնպէս ասոնք ալ կ'ընդդիմանան ճշմարտութեան: Միտքով ապականած մարդիկ, որ խոտելի են հաւատքի մէջ. բայց աւելի պիտի չյառաջդիմեն, որովհետեւ իրենց անմտութիւնը բացայայտ պիտի ըլլայ բոլորին, ինչպէս եղաւ անոնց երկուքինը:

Իսկ դուն հետեւեցար իմ վարդապետութեանս, ապրելակերպիս, առաջադրութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, սիրոյս, համբերութեանս, հալածանքներուս եւ չարչարանքներուս, որոնք պատահեցան ինծի Անտիոքի, Իկոնիոնի ու Լիւստրայի մէջ: Ի՜նչ հալածանքներ կրեցի. բայց Տէրը ազատեց զիս բոլորէն: Եւ բոլոր անոնք՝ որ կ'ուզեն բարեպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով, պիտի հալածուին:

The Epistle of St Paul to the 2 Timothy 3:1-12;

But mark this: There will be terrible times in the last days. People will be lovers of themselves, lovers of money, boastful, proud, abusive, disobedient to their parents, ungrateful, unholy, without love, unforgiving, slanderous, without self-control, brutal, not lovers of the good, treacherous, rash, conceited, lovers of pleasure rather than lovers of God— having a form of godliness but denying its power. Have nothing to do with such people.

They are the kind who worm their way into homes and gain control over gullible women, who are loaded down with sins and are swayed by all kinds of evil desires, always learning but never able to come to a knowledge of the truth. Just as Jannes and Jambres opposed Moses, so also these teachers oppose the truth. They are men of depraved minds, who, as far as the faith is concerned, are rejected. But they will not get very far because, as in the case of those men, their folly will be clear to everyone.

A Final Charge to Timothy

You, however, know all about my teaching, my way of life, my purpose, faith, patience, love, endurance, persecutions, sufferings—what kinds of things happened to me in Antioch, Iconium and Lystra, the persecutions I endured. Yet the Lord rescued me from all of them. In fact, everyone who wants to live a godly life in Christ Jesus will be persecuted,

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 6:22-38

Հետեւեալ օրը՝ բազմութիւնը, որ ծովուն միւս եզերքն էր, տեսաւ թէ ուրիշ նաւակ չկար այն մէկէն զատ՝ որուն մէջ անոր աշակերտները մտած էին, եւ թէ Յիսուս իր աշակերտներուն հետ մտած չէր նաւակը, այլ անոր աշակերտները առանձին գացեր էին (բայց Տիբերիայէն ուրիշ նաւակներ եկան այն տեղին մօտ, ուր կերեր էին հացը՝ Տէրոջ շնորհակալ ըլլալէն ետք): Ուրեմն բազմութիւնը՝ տեսնելով թէ ո՛չ Յիսուս հոն է, ո՛չ ալ անոր աշակերտները, իրե՛նք ալ նաւ մտան եւ գացին Կափառնայում՝ փնտռելու Յիսուսը: Երբ գտան զինք՝ ծովուն միւս եզերքը, ըսին իրեն. «Ռաբբի՛, ե՞րբ եկար հոս»:

Յիսուս պատասխանեց անոնց. *«Ճշմա՛րտապէս, ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. “Դուք զիս կը փնտռէք՝ ո՛չ թէ քանի որ նշաններ տեսաք, հապա՝ որովհետեւ նկանակներէն կերաք ու կշտացաք”: Գացէ՛ք, գործեցէ՛ք ո՛չ թէ կորստական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար՝ որ կը մնայ յաւիտենական կեանքին մէջ, եւ մարդու Որդի՛ն պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրը՝ Աստուած զի՛նք կնքեց»:* Ուրեմն ըսին իրեն. «Ի՞նչ ընենք՝ որպէսզի կատարենք Աստուծոյ գործերը»: Յիսուս պատասխանեց անոնց. *«Սա՛ է Աստուծոյ գործը, որ հաւատաք անոր որկածին»*: Ուստի ըսին իրեն. «Բայց դուն ի՞նչ նշան կ’ընես, որ տեսնենք ու հաւատանք քեզի. ի՞նչ կը գործես: Մեր հայրերը անապատին մէջ մանանա՛ն կերան, ինչպէս գրուած է. “Երկինքէն հաց տուաւ անոնց՝ որպէսզի ուտեն”»: Իսկ Յիսուս ըսաւ անոնց. *«Ճշմա՛րտապէս, ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մովսէս չտուաւ ձեզի երկնային հացը, բայց իմ Հա՛յրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնային հացը”. որովհետեւ Աստուծոյ հացը ա՛ն է, որ կ’իջնէ երկինքէն եւ կեանք կու տայ աշխարհի»:* Ուրեմն ըսին իրեն. «Տէ՛ր, ամէ՛ն ատեն տուր մեզի այդ հացը»:

Յիսուս ըսաւ անոնց. *«Ե՛ս եմ կեանքի հացը. ա՛ն որ կու գայ ինծի՝ երբէ՛ք պիտի չանօթենայ, եւ ա՛ն որ կը հաւատայ ինծի՝ պիտի չծարաւնայ: Բայց ես ըսի ձեզի. “Դուք զիս տեսաք ալ, ու չէք հաւատար”: Բոլոր անոնք որ Հայրը կու տայ ինծի՝ պիտի գան ինծի, եւ ա՛ն որ կու գայ ինծի՝ բնա՛ւ պիտի չվտարեմ: Որովհետեւ ես իջայ երկինքէն՝ գործադրելու ո՛չ թէ ի՛մ կամքս, հապա անո՛ր կամքը՝ որ ղրկեց զիս:*

The Holy Gospel of Jesus Christ according to John 6:22-38

The next day the crowd that had stayed on the opposite shore of the lake realized that only one boat had been there, and that Jesus had not entered it with his disciples, but that they had gone away alone. Then some boats from Tiberias landed near the place where the people had eaten the bread after the Lord had given thanks. Once the crowd realized that neither Jesus nor his disciples were there, they got into the boats and went to Capernaum in search of Jesus.

Jesus the Bread of Life

When they found him on the other side of the lake, they asked him, “Rabbi, when did you get here?”

Jesus answered, *“Very truly I tell you, you are looking for me, not because you saw the signs I performed but because you ate the loaves and had your fill. Do not work for food that spoils, but for food that endures to eternal life, which the Son of Man will give you. For on him God the Father has placed his seal of approval.”*

Then they asked him, “What must we do to do the works God requires?”

Jesus answered, *“The work of God is this: to believe in the one he has sent.”*

So they asked him, “What sign then will you give that we may see it and believe you? What will you do? Our ancestors ate the manna in the wilderness; as it is written: ‘He gave them bread from heaven to eat.’ ̲ ̲ ”

Jesus said to them, *“Very truly I tell you, it is not Moses who has given you the bread from heaven, but it is my Father who gives you the true bread from heaven. For the bread of God is the bread that comes down from heaven and gives life to the world.”*

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous in order for us to keep the doors open and provide all the services.

"Sir," they said, "always give us this bread."

Then Jesus declared, *"I am the bread of life. Whoever comes to me will never go hungry, and whoever believes in me will never be thirsty. But as I told you, you have seen me and still you do not believe. All those the Father gives me will come to me, and whoever comes to me I will never drive away. For I have come down from heaven not to do my will but to do the will of him who sent me.*

Երիտասարդների բարեխոս Ս. Սարգիս զորավարի հիշատակության օր

Ամենայն Հայոց Գարեգին Բ հայրապետի տնօրինությամբ Ս. Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր: Ս. Սարգիս զորավարն ամենասիրված սրբերից է: Իր որդու՝ Մարտիրոսի և 14 քաջ մարտիկների հետ նա նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի: Արիության համար Ս. Սարգիսը Մեծն Կոստանդիանոս կայսեր (285-337) կողմից կարգվում է իշխան և սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ միայն գերազանց սպարապետ էր, այլև հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոժարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է հեթանոսական մեհյանները, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Ս. Սարգիսը, աստվածային հայտնությամբ հրաման առնելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը զերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգսին ծառայության անցնել Շապուհի մոտ: Շապուհը սիրով ընդունում է Ս. Սարգսին և նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Զորականներից շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, իր աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում էին հեթանոսությունից և դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը և զոհ մատուցել: Զորավարն անմիջապես մերժում է՝ ասելով. «Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, ով ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»: Այդ խոսքերից հետո Ս. Սարգիսը կործանում է բագինը: Զայրացած ամբոխը հարձակվում է Ս. Սարգսի և նրա որդու վրա: Առաջինը նահատակության պսակն ընդունում է նրա որդին՝ Ս. Մարտիրոսը: Ս. Սարգիսը բանտարկվում է և աներեր մնալով իր հավատքի մեջ՝ գլխատվում: Նահատակվելուց հետո Ս. Սարգսի մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաև Ս. Սարգսին հավատարիմ տասնչորս զինվորները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում են Համիան քաղաքում:

Ս. Սարգիս՝ երիտասարդների և սիրո բարեխոս.

Ս. Սարգիսը հայ ժողովրդի ամենասիրված սրբերից է, և պատահական չէ, որ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը նրա մասունքները բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

Ս. Սարգիս Զորավարի տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլև ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Ս. Սարգիս զորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն դիմում են սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված:

Ս. Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրվա

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

հիշատակելի սովորություններից է փոխինդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին և սպասել Ս. Սարգիս զորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի՝ Ս. Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի, և ում մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխինդի մեջ թողնի մաքրություն, անաղարտություն խորհրդանշող իր սպիտակ ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա տվյալ հավատացյալի երազանքը: Երիտասարդները տոնի առթիվ միմյանց բացիկներ և քաղցրավենիք են նվիրում: Տոնի օրը Ս. Սարգիս Զորավարի անունը կրող եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ, որից հետո կատարվում է երիտասարդների օրհնության կարգ:

Feast of St. Sarkis the Captain, Patron of Love and Youth, his son Martyros and his 14 Soldiers-Companions St. Sarkis the Captain

By the order of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, the Feast of St. Sarkis the Captain and his soldiers-companions is proclaimed day of blessing of the youth.

Captain St. Sarkis is one of the most beloved saints among the Armenian nation. Together with his 14 soldiers-companions he was martyred for the sake of Christian faith.

During the period of reign of the king Kostandianos the Great (285-337) St. Sarkis, being very courageous, was appointed the prince and General in chief of the region of Cappadocia bordering Armenia. When during the period of reign of the king Julianos the Betrayer (360-363) the persecutions against Christians started by God's will St. Sarkis and his only son – Martyros, came to live in Armenia, and the Armenian king Tiran, grandson of Tiridates, received them very well. From Armenia St. Sarkis and his son went to Persia, and started serving in the army of the Persian king Shapouh as the captain of regiments. Become aware of the fact that Sarkis was Christian the king Shapouh ordered him to worship the fire and offer sacrifice to the heathen gods. But the captain immediately refused to obey the order saying, "We should worship one God - the Holy Trinity, which has created the earth and the heaven. Whereas fire or idols are not gods and the human being may destroy them." After these words the saint destroyed the temple. The annoyed crowd fell on the saint and his son. First the son of the saint was martyred. The saint was put into prison and remaining unshaken in his faith was beheaded. After the martyrdom of the saint light appeared over his body. 14 soldiers-companions of the saint also were martyred for the sake of Christian faith.
For the Armenian nation St. Sarkis is one of the most beloved. It isn't casual that St. Mesrop Mashtots brought the relics of the saint to the village Karbi (Ashtarak Region) and the Church of St. Sarkis was built over his relics.

Sts. Atomians were the Armenian captains Atom Gnouni and Manajihr Reshtouni who together with their regiments served in the Persian royal court during the period of reign of the idolater king Hazkert. Upon the excitation of archimagi king Hazkert started persecutions against Christians in order to eradicate Christian faith in Persia. Captains Atom Gnouni and Manajihr Reshtouni received an edict from Hazkert inviting the captains together with their regiments to the royal palace with the intention of forcing them to apostasy. At first the Armenian captains obeyed the order, but being aware of the trap prepared by the king they started back home and on their way home they stopped in the province of Andzevatsyats. Becoming aware of the numerous Persian Army persecuting them soldiers of the captain Atom Gnouni, encouraged by the prophesy of a saint hermit living on the mountain preferred voluntary martyrdom. Persian Army reaching the Armenian regiment surrounded them and killed the saints by words. Whereas Manajihr Reshtouni and his soldiers reached his native land – Reshtounik, where he confessed his being Christian and was martyred in 449 AD.

St. Sarkis, Patron of Youth and love

In Armenia it is accepted to celebrate the Feast of St. Sarkis not only according to church rites and prayer, but also according to various folk traditions. St. Sarkis the Captain is the patron of youth. Many miracles happen thanks to his intercession. On the day of the feast young people pray the saint asking him to make their prayers audible to God. St. Sarkis is the realizer of the love longings.

There are many legends about St. Sarkis and one of them is the following.

Poor bard Gharib loved Shah-Sanam who was the daughter of a very rich man. Shah-Sanam loved him, too, but because the bard was poor, the Shah-Sanam's father was against their marriage as he wished to marry his daughter to a rich man. Bard Gharib decided to go to foreign countries to

earn money and to accumulate wealth. But before leaving for foreign countries bard Gharib asked Shah-Sanam to promise to wait for him for seven years providing that if he were late even for one day the young woman might marry according to her father's will.

That seven-year-period was a very difficult period for bard Gharib. He couldn't see his beloved, had no news of her, and nevertheless, he wasn't disappointed and waited for the time when they would meet, make up family and live together all their life.

Working day and night for seven years bard Gharib accumulated wealth and started his way back to the motherland. However, on his way back he faced many difficulties and hardships. It seemed to him that he wouldn't be able to reach his beloved. So, he prayed with honest heart and righteous mind for the help of St. Sarkis asking.

Listening the prayer of the bard St. Sarkis immediately appeared sitting on his white horse, seated him on the back of the horse and in one moment brought him to Shah-Sanam. Seeing the bard's strong will, their sincere and deep love and devotion, Shah-Sanam's father blessed their union.

Fast of Catechumens established by St. Gregory the Illuminator precedes the feast. On the eve of the feast, in the evening, young people eat salty cookies and relate the appearance of their future bride or bridegroom in their dream to eating of the salty cookie. Also, on the night preceding the feast of St. Sarkis the faithful people place a tray full of gruel before the door believing that while passing near their door at dawn St. Sarkis will leave his footprint on the gruel symbolizing the fulfilment of their dreams.

People in love present each other cards, flowers or sweets on the occasion of the feast. On the day of the feast a Divine Liturgy is celebrated in all churches named after St. Sarkis. Following the Liturgy a special ceremony of blessing of young people will be offered.

Congratulations;

St Yeghiche Armenian Church Parish Council, would like to wish everyone who carry the name SARKIS, (SAKO), SERGEIO, SERGEY,SERJ, MARDIROS, RAZMIG, MARDIG our sincere congratulations and best wishes on the occasion of St Sarkis.

Announcement

Dear St Yeghiche Parish Registered Members,

We are pleased to inform you that our Annual Parish General Assembly Meeting (AGM) will take place on 9th March 2025 at St Yeghiche Armenian Church at 1:00pm.

As stated in our constitution all registered members are encouraged and should participate at this Annual Parish Assembly meeting provided they have paid their Parish Contribution for the year and up to 2024.

Your attendance is extremely important to evaluate and support your Parish and its council who have collectively volunteered to run the activities at the church and within your Parish.

We look forward seeing you **St Yeghiche Armenian Church Parish Council**

Thank You

St Yeghiche Armenian Church celebrated on Thursday 13th February evening the feast of Presentation of our Lord to the temple (**Տեառնընդառաջ**, Tiarn'ndaraj), celebration of Light and Blessing. HG Bishop Hovakim presided over the prayer service which was lead by Fr Shnork Bagdasarian and our visiting clergy Fr Bedros from Armenian Patriarchate of Istanbul. The service followed by the blessing of newlyweds and the traditional lighting of bonfire in the courtyard. We want to thank our Ladies Guild for their hospitality after the service.

St Yeghiche Armenian Church Parish Council

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ վերջապէս, զօրացէ՛ք Տիրոջով եւ նրա զօրութեան կարողութեամբ. եւ Աստծու սպառազինութիւնը հագէ՛ք, որպէսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարանքներին» (Եփ. 6:10-11):

Քրիստոսի հոգեւոր բանակի սիրելի՛ զինակիցներ,

Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցում սրբերի մէջ յետաքրքիր շարք են կազմում ռազմիկ սրբերը՝ զօրավարներ ***ս. Գէորգ, ս. Սարգիս՝ իր որդւով եւ 14 զինուորներով, Ս. Մերկերիոս, Ս.Թէոդորոս, Անդրէ զօրավար եւ իր բանակ, Վարոս զօրական, Գորդիոս հարիւրապետ, Մինաս Եգիպտացի զօրական, Հիւսիքոս զինուոր, Քրիստափոր Վկայ, Սեբաստիոյ քառասուն Մանկունք*** եւն: Եկեղեցու համար իրենց սրբադասման համար, անշուշտ, առաջնային չի եղել այն, որ նրանք ռազմական ասպարէզի մարդիկ են, այլ հաւատքի վկայութիւնը: Սակայն շատ զինուորներ, եւ սպաներ են այս սուրբերով ներշնչուել եւ ոգեւորուել՝ համոզուելով, որ հնարաւոր է լաւ քրիստոնեայ լինել անգամ զինուորական համազգեստով եւ պատերազմի դաշտում: Հնարաւոր է եւ պէտք է այդ միջավայրում եւս վկայել Քրիստոսին եւ շատերի համար էլ Փրկչին ընդունելու միջոց դառնալ: Այս սուրբերը սիրելի են ոչ միայն հաւատացեալ զինուորականների, այլեւ բոլոր քրիստոնեաների կողմից, քանի որ բոլոր մարտիրոսների պէս Աստծուն հաւատարիմ լինելու, համբերելու, մեղքին եւ ուրացութեանը դիմադրելու օրինակ են տալիս: Մարդկանց համար սիրելի են այս սուրբերն այնքանով, որ մօտ են մեզ, մեզ պէս միս ու արիւն են՝ կեանքի դժուարութիւններով եւ փորձութիւններով:

Գաղտնիք չէ, որ հոգեւոր սկզբունքերով ապրել ձգտող ամէն մարդ Աստծուն իր կեանքում ունենալու քաղցրութեան հետ նաեւ ենթակայ է դառնում հարձակումների, փորձութիւնների: Հոգեւոր կեանքի մասին յաճախ թերի ընկալում կա՝ կարծելով, որ Աստծուն հաւատալով այլեւս ոչ մի փորձութիւն, հիւանդութիւն, կեանքի ու գործի մէջ անյաջողութիւն կամ ձախողում չեն ունենալու: Սակայն չը կայ քրիստոնեայ, որ փորձութեան ճանապարհով անցած չլինի: Փորձութիւնը մեր հոգեւոր աճումի, հասունացման կարեւոր մաս է: Իր մկրտութիւնից յետոյ Քրիստոս քառասուն օր անապատում մենացաւ եւ փորձուեց սատանայից՝ յաղթելով նրան: Սա օրինակ է, որ մենք ոչ միայն չվախենանք փորձութիւնից, այլ սովորենք փորձչին յաղթելու կերպերը Փրկչից. ***«...Մտաբերեցէ՛ք Յիսուսին, որ այսպէս համբերեց իր հանդէպ մեղաւորների ունեցած հակառակութեանը, որպէսզի չլինի թէ յոգնէք եւ յուսալքուէք, դուք, որ կռուի մէջ դեռ արիւն թափելու չափ չհակառակուեցիք մեղքին»*** **(Եբր. 12:3-4):**

Մեր կեանքը հոգեւոր անտեսանելի պատերազմ է, ուր Քրիստոս է զօրագլուխը, իսկ սուրբերը՝ արդեն յաղթանակած օրինակները: Ազգով յոյն սուրբ Սարգիսը, որ մէկն է դրանցից, բարեպաշտ իշխան էր, որ «ստրատելատ» զօրավարական աստճանով ծառայել էր Բիւզանդական բանակի մէջ Կոստանդիանոս Մեծի եւ նրա որդու օրոք: Երբ գահին բազմած Յուլիանոսը ուրացաւ քրիստոնէութիւնը եւ փորձեց ստիպել մարդկանց վերադառնալ կռապաշտութեան, նոր հալածանքներ սկսեց քրիստոնէութեան դէմ: Սարգիս զօրավարն էլ, նրանից հալածուելով, պարսից Շապուհ թագաւորի մօտ ծառայութեան անցաւ, ուր շատ յաղթանակներով մեծ անուն եւ փառք վաստակեց: Բայց երբ ամբաստանութիւն եղաւ Շապուհի մօտ, որ շատ զինուորների իր կերպարով ու խօսքով քրիստոնեայ է դարձնում, թագաւորը Սարգսին իր մօտ կանչեց եւ կրակին զոհ մատուցելու հրաման տուեց: Երկինքն ու երկիրը ստեղծող միակ Աստծոյ մասին խօսեց ու վկայեց զօրավար սուրբը՝ կործանելով բագինն ու մարելով կրակը: Իր որդի Մարտիրոսի նահատակութեան եւ թագաւորի համոզելու փորձերի դիմաց համարձակօրէն շարունակեց վկայել Քրիստոսի հաւատքը եւ գլխատուեց Յունուար 30-ին: Շապուհ թագաւորը կեանք եւ աւելի փառք խոստացաւ, բայց նահատակ զօրավարը Քրիստոս թագաւորի խոստացած յաւիտենական կեանքն ու փառքը ընտրեց:

Ցանկացած հաւատացեալ իր կեանքի փառքի եւ անկումի շրջանն ունի: Զգոյշ պէտք է լինենք, որ նոր խոստումնալից եւ գայթակղիչ առաջարկները չը լինեն հոգեւոր ուրացումի հաշուին: Բոլոր նահատակների եւ մարտիրոսների դէպքում էլ կարող ենք տեսնել, որ Քրիստոսին ուրանալու համար փառք, հարստութիւն եւ բարեկեցութիւն է խոստացուել:

Շատ են նաեւ փորձութեանը չը դիմացողները եւ հարստութեամբ գայթակղուողները, որոնք երբեմն իսկապէս ստացել են խոստացուածը՝ վաստակելով նաեւ ուրացողի եւ հուդայի անուն: Մեր ժամանակների մեծագոյն վտանգներից մէկն է նոր ոճով եւ կիրթ կերպով ուրանալու առաջարկները՝ դրա դիմաց կրկին նոյն անցողիկ, բայց շլացնող փառամոլ խոստումներով: Մերն է ընտրութիւնը:

Պատմւում է, որ երբ սուրբ Սարգիս զօրավարին գլխատեցին, այդ տեղի վրայ երկնքից լոյս ծագեց, որը տեսնելով՝ իր տասնչորս զինուորներն աւելի հաստատուեցին քրիստոնէական հաւատքի մէջ: Նրանք վերցրին ու պատանեցին մարմինը՝ պատուով թաղելու համար: Բայց երբ լուրը հասաւ Շապուհին, հրամայեց նահատակել նաեւ այս նորադարձներին եւս: Սուրբ Սարգսի ոչ միայն կեանքը, այլեւ մահը հաւատքի քարոզութիւն եղաւ՝ մարդկանց սրտերը Քրիստոսի սիրուն դարձնելով:

Եկեղեցին, տօնելով նահատակ այս սուրբերի յիշատակը, պատմում է նրանց մասին, նրանց օրինակով ոգեւորում այսօրուայ հաւատացեալին, որ անզիջում մնայ իր հոգեւոր հաւատամքի մէջ: Նրանք արժանի եղան այս կեանքից առաւել կատարեալին՝ յաւիտենական փառաւոր Արքայութեանը եւ սովորեցրին չտարուել անցողիկ խոստումներով եւ նիւթական հարստութեամբ, երկքի խոստացուած գանձը չփոխել աշխարհի դրամի հետ: Իրենց ապրած կեանքը եւ անգամ մահը Աստծոյ փառքին ծառայեց, իսկ մեզ համար կոչ եղաւ, որ ընկենք թէ կանգնենք, Աստծուն հաւատարիմ լինենք:

Սուրբ Սարգիսը համաժողովրդական սէր է վայելում մանաւանդ Հայ Եկեղեցու մէջ, ինչին թերեւս նպաստել է սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասնաւոր սէրն ու վերաբերմունքը նրա նկատմամբ: Նա սուրբ նահատակի մասունքները Պարսկաստանից հայկական Կարբի գիւղ բերեց եւ հռչակաւոր վանք կառուցեց այդ նշխարների վրայ: Ս. Մաշտոցի կողմից Վրաստանում կանգնեցուած Գագայ սուրբ Խաչը, որի մեջ նա զետեղել է այս մասունքից, յայտնի է մանաւանդ գերիների, բանտուածների եւ հիւանդների վրայ եղած մեծամեծ հրաշքներով եւ սքանչելիքներով: Չէ՞ որ Աստուած փառաւորւում է Իր սրբերով, որոնց մասունքների միջոցով Աստծոյ Սուրբ Հոգին շարունակում է զօրաւոր խնամք մատակարարել Աստծուն հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագողներին: Անգամ պարսիկներն են ս. Սարգսին կոչել «**Անյաղթ վկայ եւ կատարիչ ամենայն խնդրուածոց**»:

Մենք էլ ամենողորմ Աստծուց եւ Փրկիչ Յիսուսից խնդրենք առողջութիւն մեր հիւանդ եղբայրներին եւ քոյրերին եւ գերեալներին ազատութիւն զօրավար սուրբի զօրաւոր բարեխօսութեամբ: Ամենքիս հաւատքի քաջութեան եւ հաւատարմութեան նոր ոգի տայ Տէրը, Ում փառք յաւիտեանս. ամէն:

Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ եւ հաւատարիմ ծառայ
Յաղթող զինաւոր եւ քաջ նահատակ,
Շնորհների օթեւան արագահաս Սուրբդ Սարգիս,
Քրիստոսի մօտ բարեխօսիր մեզ համար:

Մարդու կեանքի ցաւերի զօրեղ բժիշկ, արցունք սրբող,
Նեղուածներին հասնող, վշտերի մէջ մխիթարող,
Գերիներին գերութիւնից հանող արագահաս Սուրբդ Սարգիս,
Քրիստոսի մօտ բարեխօսիր մեզ համար:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

17 February	Sts. Adom and Generals, and Sts. Mark the Bishop, Plonius the Priest, Cyril and Benjamin the Deacons, and Martyrs Abdelmasih, Ormisdan, and Sayen Wisdom 6:12-21; Isaiah 18:7-19:7; 2 Corinthians 4:10-5:5; John 16:1-5
18 February	Sts. Sookias and Martyrs Proverbs 22:1-12; Isaiah 56:6-7; Hebrews 11:30-40; Luke 12:4-9
19 February	2 Timothy 3:16-4:8; John 7:1-13
20 February	Sts. Voski and Priests Proverbs 24:1-12; Jeremiah 30:18-22; 2 Timothy 3:10-12; Matthew 5:1-12
21 February	2 Timothy 4:9-22; John 7:14-23
22 February	St. Sahag Bartev Wisdom 7:12-18; Isaiah 61:3-7; Hebrews 13:17-21; John 10:11-16

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Baroian, Haroutyunian, Azadian, Markarian, Sarkisian and their Families for the souls of their relatives the late **ARUSIAG BAROIAN**, **NICOLA** and **VARTAN HAROUTYUNIAN** on the memorial service of their passing, also for all the old and new deceased members of the **BAROYAN**, **HAROUTYUNIAN**, **AZADIAN**, **MARKARIAN** and **SARKISIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;
-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal
Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

Dear Parishioners
and
Armenian Community Members

The St Yeghiche Armenian Church's 2025 year calendar is out, with both Armenian Religious Feast dates and UK holiday dates.

These are available at St Yeghiche Armenian Church front desk,
from Sunday 1st December 2024,
and till the stock last.

These are great gift idea for New Year
To give to your friends and relatives.

We encourage every Armenian Household to have one, and bring our Lords blessing to your home and Family.

Thank you for your generous support
St Yeghiche Armenian Church Parish Council

St Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Registered Charity No 1173403
St Yeghiche Armenian Church Parish Ltd, 13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB t.+44 20 7373 8133 e.info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

Vartanantz

The Battle of Vartanantz represents the conviction of the Armenian nation as it stood up for its faith in Christianity when it was challenged by the Persian Empire.

We will be celebrating VARTANANTZ
on 27th February 2025@19:00 with Evening Prayers and Presentation.

The great Armenian military leader Vartan Mamigonian, along with the Armenian nation, replied, "Neither angels nor men nor the sword nor fire would ever turn the Armenian people away from Christianity."

The Battle of Vartanantz was and is the defining event in our history that gave us a spirit of perseverance, resolve and sacrifice, which has lasted until today. It's up to us to remember to relive and re-experience the perseverance, re- solve and sacrifice of our ancestors, and to honour and preserve their enduring spirit.

Please join and let us celebrate the service and reaffirm our Armenian Christian Faith in a unique Church Tradition.